2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱՓԼԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԱՐԹՈՒՐԻ

ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 1991-2010 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Է.00.02 – «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ. Վահրամ Տեր-Մաթևոսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Արսեն Ավագյան
պ.գ.թ., դոցենտ Բենիամին Մայիլյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հուլիսի 27-ին ժամը 13:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունիսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ. Մ. Հ. Ղահրիյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ուսումնասիրության թեմայի արդիականությունը: 1980-ական թվականների երկրորդ կեսին ԽՍՀՄ իշխանությունների առաջ քաշած «Վերակառուցման» քաղաքականության և կենտրոնական իշխանությունների ազդեցության թուլացման արդյունքում խորհրդային պետության տարբեր շրջաններում կրկին գլուխ բարձրացրեցին տարիների ընթացքում սառեցված ազգամիջյան հակամարտությունները: Նոր իրողությունները հատկապես սուր արտահայտվեցին Հարավային Կովկասում, որտեղ տարբեր շրջանների կարգավիճակի շուրջ ծայր առած հակասությունները իրավական գործընթացներից վերաճեցին զինված բախումների հակամարտող կողմերի միջև, որոնց թվում էր նաև Աբխազիան: Չնայած նրան, որ Աբխազիայում արդեն ավելի քան 20 տարի ավարտվել են լայնածավալ ռազմական գործողությունները, իսկ երկրի անկախությունը ճանաչել են ՄԱԿ-ի անդամ մի շարք պետություններ, արդիական են Աբխազիայի կարգավիճակի վերաբերյալ քննարկումները, որոնք մինչ օրս շարունակվում են մնալ տարածաշրջանային օրակարգի ամենասուր հարցերից մեկը:

Տարածաշրջանային զարգացումները լավագույնս հասկանալու համար, արդիական են նաև տարածաշրջանում անմիջական ազդեցություն ունեցող պետությունների մոտեցումները Աբխազիայի հարցում: Թուրքիան, լինելով հարավկովկասյան տարածաշրջանում ազդեցություն ունեցող պետություններից մեկը, կանգնեց Հարավային Կովկասի հարցում տարածաշրջանային քաղաքականության մշակման անհրաժեշտության առաջ: Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մշակման հարցում առանցքային խնդիրներից մեկը դարձավ Աբխազիայի կարգավիճակի շուրջ առաջացած վրաց-աբխազական հակամարտության նկատմամբ մոտեցումների ձևավորումը: Արդեն 1990-ականների առաջին կեսին Անկարայի որդեդրած մոտեցումները Աբխազիայի հարցում չեն կորցրել իրենց արդիականությունը և կարևոր են վերջինիս տարածքային քաղաքականության ուսումնասիրության հարցում: Սկսած 1990-ական թվականներից թուրքական իշխանությունները իրենց պաշտոնական հայտարարություններում մշտապես հանդես են գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության սկզբունքի պաշտպանության դիրքերից, սակայն միևնույն ժամանակ շարունակում է զարգանալ Անկարայի և Սուխումի միջև առկա համագործակցությունը տարբեր ոլորտներում: Անկարայի քաղաքականությունը պայմանավորված է մի շարք արտաքին և ներքին

գործոններով: Մի կողմից Սուխումի նկատմամբ Անկարայի որդեգրած քաղաքականության օրակարգի վրա անմիջական ազդեցություն ունի Ռուսաստանի և Վրաստանի հետ Թուրքիայի ունեցած համագործակցությունը ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ոլորտներում: Մյուս կողմից թուրքական իշխանությունները գործ ունեն միջազգայնորեն չճանաչված պետության հետ, որի օգտին վրաց-աբխազական պատերազմի սկսվելուց հետո ակտիվ լոբբիստական գործունեություն են իրականացնում Թուրքիայում հաստատված աբխազական և չերքեզական համայնքները:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները

Աշխատանքի նպատակն է 1991-2010 թվականներին թուրք-աբխազական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը:

Ատենախոսական աշխատանքի առջև դրված խնդիրներն են.

- 1992-1993 թվականների վրաց-աբխազական պատերազմի և 2008 թվականի ռուս-վրացական պատերազմի ընթացքում Թուրքիայի վարած քաղաքականության ուսումնասիրությունը,
- Աբխազիայի տնտեսությունում Թուրքիայի մասնակցության առանձնահատկությունների վերլուծությունը,
- Աբխազիայում թուրքական կողմի իրականացրած մշակութային գործունեության ուսումնասիրությունը,
- Թուրք-ռուսական և թուրք-վրացական երկկողմ հարաբերություններում աբխազական գործոնի ունեցած ազդեցության համեմատական վերլուծությունը,
- Թուրքիայում աբխազական կազմակերպությունների լոբբիստական գործունեության և Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա հնարավոր ազդեցության ուսումնասիրությունը:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ներկայացվող ատենախոսության ժամանակագրական սահմանները ներառում են 1991-2010 թվականներին թուրք-աբխազական հարաբերությունների հետ կապված զարգացումները, սակայն հետազոտության խնդիրների համապարփակ ուսումնասիրության համար անդրադարձ է կատարվել նաև պատմական այլ ժամանակահատվածների:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության թեմայի հետազոտության հիմքում ընկած է թուրք-աբխազական հարաբերություններին վերաբերվող փաստաթղթերի, հիմնախնդրին առնչվող միջպետական համաձայնագրերի, պետական գերատեսչությունների կողմից պատրաստված հաշվետվությունների և վերոնշյալ ժամանակահատվածում տպագիր և առցանց մամուլում տեղ գտած հրապարակումների պատմաքննական և պատմավերլուծական մեթոդների կիրառմամբ կատարված ուսումնասիրությունը:

Ատենախոսության գիտական նորույթը:

- Ատենախոսությունում համակողմանիորեն և խորապես ուսումնասիրվել է թուրք-աբխազական հարաբերությունների պատմությունը, 1991-2010 թվականներին թուրք-աբխազական հարաբերությունները, ներկայացվել են Աբխազիայի հարցում Թուրքիայի քաղաքականության առանձնահատկությունները և գործունեության հիմնական ոլորտները,
- Աբխազական հիմնախնդիրը շարունակում է առանցքային տեղ զբաղեցնել Հարավային Կովկասում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունում: Աբխազիայի հարցում Թուրքիայի որդեգրած մոտեցումները մինչ օրս շարունակում են մնալ տարածաշրջանային քաղաքականության համատեքստում Վրաստանի և Ռուսաստանի հետ հարաբերություններում կարևորագույն, բայց միևնույն ժամանակ հանրային հնչեղություն չունեցող հարցերից մեկը,
- Ատենախոսությունում հիմնավորվում է, որ 1992-1993 թվականների վրաց-աբխազական պատերազմը նպաստեց նրան, որ Թուրքիայում բնակվող աբխազական համայնքի և ազգային կազմակերպությունների առանցքային աշխատանքային ուղղություններից մեկը դարձավ լոբբիստական գործունեությունը հօգուտ Աբխազիայի: Կազմակերպությունների գործունեությունը նպաստեց նրան, որ աբխազական համայնքը դարձավ Աբխազիայի հարցում Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա ազդեցություն ունեցող առանձին քաղաքական միավոր: Ատենախոսությունում ամբողջովին ուսումնասիրվել են ընտրված ժամանակահատվածում Թուրքիայում գործող աբխազական և չերքեզական կազմակերպությունների գործունեությանը վերաբերող պաշտոնական փաստաթղթերը,

կազմակերպությունների հաշվետվությունները և մամուլում տեղ հրապարակումները:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Ատենախոսության դրույթները կարող են օգտակար լինել Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը, Աբխազիայի հակամարտությունը, թուրք-վրացական և թուրք-ռուսական հարաբերությունները, Թուրքիայում բնակվող ազգային փոքրմասնություններին ուսումնասիրողների համար, կիրառվել այս թեմաների վերաբերյալ բուհական դասընթացներում:

Ատենախոսության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը

Ատենախոսության մեջ ներկայացվող դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի հրատարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսությունն ամբողջությամբ քննարկվել և հավանության է արժանացել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Թյուրքագիտության ամբիոնում: Քննարկման մասնակիցների արված նկատառումները հաշվի են առնվել ատենախոսության վերջնական տարբերակում:

Օգտագործված գրականության համառոտ տեսություն: Ժամանակագրական այս հատվածում թուրք-աբխազական հարաբերությունների առանձնահատկությունները լավագույնս հասկանալու համար կարևոր էր երկկողմ հարաբերությունների վերաբերյալ աշխատանքների ուսումնասիրությունը: Աբխազիայի պատմության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են տեղ գտել ակադեմիկոս Նիկոլայ Բերձենաշվիլիի խմբագրությամբ լույս տեսած «Վրաստանի պատմությունը. Հնագույն ժամանակներից մինչև XIX դարի սկիզբը» գրքում, որում մանրամասն նկարագրված է Վրացական ԽՍՀ-ի մաս կազմող շրջանների պատմությունը սկսած հնագույն ժամանակներից մինչև 1960-ականները[1]: Օսմանյան կայսրության դեպի Աբխազիա և Հարավային Կովկաս կատարած արշավանքների մասին արժեքավոր տեղեկություններ կան ամերիկահայ պատմաբան Ռոնալդ Սյունիի «Վրաց ժողովրդի կազմավորումը» աշխատությունում: Մշակութային, սոցիալական և դիսկուրսային վերլուծության

[1] Н. Бердзинишвили, «История Грузии. С древних времен до начала XIX века», Тбилиси, 1962

վրա հիմնված ուսումնասիրությունում հատուկ անդրադարձ է կատարվում Վրաստանի բնակչության տարբեր էթնիկ խմբերի ձևավորման պատմությանը[2]: Աբխազիայի բնակչության էթնիկ պատմության մասին արժեքավոր տեղեկություններ կան նաև աբխազ պատմաբան-կովկասագետ Զուրաբ Անչաբաձեի «Աբխազների ազգային պատմության ակնարկ» աշխատությունում[3]: Աբխազիայի պատմության մասին փաստագրական բավականին արժեքավոր տեղեկություններ կան պատմաբան Թիմուր Աչուգբայի «Աբխազիայի պատմությունը թվերով» և ակադեմիկոս Օլեգ Բգաբժայի և պրոֆեսոր Ստանիսլավ Լակոբայի «Աբխազիայի պատմությունը, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» աշխատություններում[4,5]: Օ. Բգաբժայի և Ս. Լակոբայի գիտական աշխատանքում առանձնակի կարևորություն են ներկայացնում նաև Աբխազիայի պատմության տարբեր շրջաններին վերաբերվող քարտեզները, որոնց միջոցով հնարավոր է պատկերացում կազմել Աբխազիայի տարբեր շրջանների, ինչպես նաև ժողովրդագրական պատկերի մասին: Աբխազական հիմնահարցի ուսումնասիրության համատեքստում կարևոր է նաև ուսումնասիրել 1917-1921 թվականներին Աբխազիայում տեղ գտած զարգացումները, երբ կարճ ժամանակահատվածում Աբխազիան անցավ անկախ հանրապետությունից մինչև Վրաստանի կազմում ինքնավար մարզ դառնալու ճանապարհը, որի վերաբերյալ աշխատություններից կարելի է առանձնացնել Բենիամին Մայիլյանի «Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցը 1917-1921թթ» մենագրությունը, որում հեղինակը անդրադառնում է տվյալ ժամանակաշրջանում վրաց-աբխազական հարաբերություններին[6]:

Ուշադրության է արժանի Ս. Լակոբայի հեղինակած «Փաստացիորեն Աբխազիա, թե՞ իրավականորեն Վրաստան» գրքին: Հեղինակը 1993-1994 թվականներին լինելով Աբխազիայի Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ, մասնակցել է Վրաստանի հետ բանակցային գործընթացներին, որոնց վերաբերյալ մի շարք մանրամասներ տեղ են գտել աշխատանքում: Վերոնշյալ տեղեկություններին զուգահեռ հեղինակը ներկայացնում է նաև աբխազական

[2] R. G. Suny, «The Making of the Georgian Nation», Bloomington: Indiana University Press, 1994
[3] В. Анчабадзе, «Очерк этнической истории абхазского народа», Сухуми, 1976
[4] Т. Ачугба, «История Абхазии в датах», Сухум, 2011
[5] О. Бгажба, Лакоба С., «История Абхазии. С древнейших времен до наших дней», Сухум: 2007
[6] Բ. Մաիլյան, «Աբխազիայի կարգավիճակի հիմնահարցը 1917-1921թթ.», Երևան, 2008

հակամարտության առաջացման պատմական դրդապատճառները[7]: 1992-1993 թվականների պատերազմի և դրան հաջորդող շրջանի վերաբերյալ ուսումնասիրություններից անհրաժեշտ է մատնանշել մի շարք աշխատություններ: Առաջինը աբխազ լրագրող Գուրամ Ամկուաբի «Աբխազիա. Չհայտարարված պատերազմի ժամանակագրությունը» չորս մասից բաղկացած աշխատանքն է, որում հեղինակը հավաքել է պատերազմի ընթացքին վերաբերվող փաստաթղթեր և նյութեր[8]: Մյուս կարևորը աշխատությունը աբխազ քաղաքական գործիչ Յուրի Վոռոնովի «Աբխազիայի սպիտակ գիրքը. Փաստաթղթեր, նյութեր, վկայություններ. 1992-1993թթ» փաստաթղթերի ժողովածուն է, որտեղ նաև տեղ են գտել ռազմական գործողությունների մասնակիցների հուշերը[9]: Այս համատեքստում կարևոր տեղեկություններ կան Թուրքիայից ժամանած աբխազ կամավորների մասին: 1990-ականներին Աբխազական հակամարտությունում թուրքական կողմի ներգրավվածության մասին արժեքավոր տվյալներ են նաև ներկայացված Ասլան Ավիձբայի «Աբխազիայի Հայրենական պատերազմի (1992-1993թթ.) ռազմաքաղաքական պատմության խնդիրները» երկհատոր աշխատությունում[10]: Հեղինակը իր աշխատանքում մանրամասն ներկայացնում է Թուրքիայի իշխանությունների և աբխազական համայնքի գործունեությունը 1992-1993 թվականների վրաց-աբխազական պատերազմի տարին, ինչպես նաև դրան հաջորդող և նախորդող շրջաններում:

Մյուս կարևոր խնդիրը, որի վրա ուշադրություն են դարձնում հետազոտողները դա Թուրքիայի՝ Աբխազիայում ունեցած ազդեցությունն է: Այս հարցում գերակշռում է այն մոտեցումը, որ Թուրքիան փորձում է փափուկ ուժի միջոցով մեծացնել իր ազդեցությունը և հասել է նրան, որ Ռուսաստանից հետո Աբխազիայի տնտեսության մեջ ապրանքաշրջանառության ծավալներով Թուրքիան երկրորդ տեղում է: Սակայն 2008 թվականի օգոստոսյան պատերազմից հետո Ռուսաստանին հաջողվել է զգալի ուժեղացնել իր դիրքերը Աբխազիայում, իսկ թեմայի ուսումնասիրությամբ զբաղբող Փոլ Կոլստոյի և Հելգե Բլաքիսրուդի աշխատանքում նույնիսկ կարելի է հանդիպել վիճարկելի

[7] З. Лакоба, «Абхазия – де-факто или Грузия де-юре?», Саппоро, 2001
[8] Г. Амкуаб, «Абхазия: хроника необъявленной войны. Часть I-IV», Москва, 1992-93
[9] Ю. Воронов, «Белая книга Абхазии. Документы, материалы, свидетельства. 1992-1993», Москва, 1993
[10] А. Авидзба, «Проблемы военно-политической истории Отечественной войны в Абхазии (1992-1993 гг.)», Сухум, 2013

մոտեցման, որ «Աբխազիան ներկայացվում է, որպես Ռուսաստանի դե ֆակտո մաս կազմող տարածք, որտեղ չկա այլ պետությունների ազդեցություն»[11]: Կարեն Վերանյանը իր հոդվածում նաև առաջ է քաշում այն միտքը, որ Աբխազիայում 2004 թվականի նախագահական ընտրությունները ցույց տվեցին, որ աբխազական հասարակության զգալի մասը Ռուսաստանի փոխարեն ձգտում է ամուր հարաբերություններ կառուցել Թուրքիայի հետ[12]:

Թուրքիայի վարած քաղաքականության արտացոլումն են նաև 2000-ականների երկրորդ կեսին թուրք տարբեր դիվանագետների այցելությունները Աբխազիա, ինչպես նաև Թուրքիայի և Վրաստանի միջև բանակցությունները Աբխազիայում իրականացվող առևտրի մասին, որոնց մասին իր աշխատանքներում անդրադարձել է ներկայումս վրացական խորհրդարանի փոխխոսնակ Սերգի Կապանաձեն[13]: Աբխազիայի հարցերով մասնագիտացած լրագրող Նիք Քլեյթոնը իր հերթին անդրադառնում է այն փաստին, որ աբխազական իշխող վերնախաղում սկսել է գերակշռել այն կարծիքը, որ իրենց իրական գործընկերը Ռուսաստանի Դաշնությունն է, իսկ Թուրքիան միայն փորձում է երկրից դուրս բերել իրեն անհրաժեշտ բնական հումքը և արտադրանքը՝ ներդրումներ չանելով երկրում[14]:

Ռուս վերլուծաբան Անտոն Կրիվենյուկը նշում է, որ Թուրքիայի և Աբխազիայի միջև տնտեսական հարաբերությունների վրա շրջափակումից ավելի մեծ ազդեցություն է թողել ռուբլու արժեզրկումը և դոլարի արժեքի բարձրացումը, ինչի հետևանքով Թուրքիայից ապրանքների ներկրումը դարձել է քիչ եկամտաբեր[15]: «Tabula» ամսագրի կողմից Աբխազիայի հետ առևտրային հարաբերություններում ներգրավված մարդկանց շրջանում կատարած հետազոտությունը վերահաստատում է այն միտքը, որ թուրքական կազմակերպությունները նախընտրում են ներդրումներ կատարելու փոխարեն

[11] P. Kolstø, H. Blakkisrud, «Living with Non-Recognition: State- and Nation-Building in South Caucasian Quasi-States», Europe-Asia Studies, Vol. 60, № 3, 2008
[12] Կ. Վերանյան, «Աբխազիան աշխարհաքաղաքական շահերի խաչմերուկում», «Նորավանք» ԳԿՀ, 21-րդ ԴԱՐ, № 4, 2005
[13] S. Kapanadze, «Turkish Trade With Abkhazia: An Apple Of Discord For Georgia», Turkish Policy Quarterly, Vol. 13, № 3, Istanbul, 2014
[14] N. Clayton, «What is Turkey doing in Abkhazia?», Heinrich-Böll-Stiftung, 16.01.2014 (https://goo.gl/aqE8mf)
[15] Ан. Кривенюк, «Абхазия - Турция: отношения, которых нет», Абхазия-Информ, 29.01.2016 (https://goo.gl/124t6L)

զբաղվել առևտրով[16]: Սա ենթադրում է, որ թուրքական ձեռներեցները չեն ցանկանում ներգրավվել երկարատև ծրագրերում և հիմնականում Աբխազիային տեսնում են, որպես հումքի սպառման և արտահանման աղբյուր, իսկ ծովային հաղորդակցության վերսկսումը աբխազական համայնքի և թուրք առևտրականների համար շարունակում է մնալ առաջնային խնդիրներից մեկը: Աբխազիայում թուրքական ազդեցության վերաբերյալ ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել «Քաղաքականությունը և սահմանային փորձը Աբխազիայում և Աջարիայում. Օսմանյան ժառանգության և ներկայումս Թուրքիայի ազդեցության դերի ուսումնասիրությունը» և «Աբխազիայի ներգրավվումը Սևծովյան տարածաշրջանում» աշխատությունները: Վերոնշյալ ուսումնասիրություններում անդրադարձ է կատարվում ներկայումս Աբխազիայում թուրքական գործունեության առանձնահատկություններին, աբխազական սփյուռքի ունեցած ազդեցությունը թուրք-աբխազական հարաբերություններում և պատմական հիմքերը[17][18]:

Աբխազական գործոնը բավականին կարևոր դեռ է խաղում թուրք-վրացական և թուրք-ռուսական հարաբերություններում: Ատենախոսության շրջանակներում այս խնդրի ուսումնասիրության համար առանցքային կարևորություն ունեն այդ տարիներին կնքված պայմանագրերը, պաշտոնական հայտարարությունները և հաշվետվությունները: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Թուրքիայի Ռուսաստանի և Վրաստանի հետ երկկողմ հարաբերություններում Աբխազական հիմնախնդրի ազդեցության մասին այս կամ այն չափով անդրադարձ է կատարվում Հարավային Կովկասում թուրքական քաղաքականության թեմայի ուսումնասիրությամբ զբաղվող հեղինակների մոտ:

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության միտումները հասկանալու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել թուրքական արտաքին քաղաքական տեսլականում գրանցված փոփոխություններին: Այս գործընթացում մեծ է Թուրքիայի վարչապետի արտաքին քաղաքականության հարցերով գլխավոր խորհրդական, հետագայում նաև արտաքին գործերի նախարար և վարչապետ Ահմեթ Դավութօղլուի ավանդը, ով իր «Ռազմա-

[16] «Turkish Investment and Trade Booms in Abkhazia», Tabula, 01.04.2011 (https://goo.gl/6inLWu)
[17] F. Smolnik, A. Weiss and Y. Zabanova, «Political space and borderland practices in Abkhazia and Adjara: exploring the role of Ottoman legacies and contemporary Turkish influences», Eurasian Geography and Economics, Vol. 58, Is. 5, Minnetonka, 2017
[18] B. Gültekin, «Abkhazia for the Integration of the Black Sea», Center for Middle Eastern Studies and Economic Policy Research Foundation of Turkey, Ankara, 2009

վարական խորություն» գրքում անդրադարձ է կատարում նոր քաղաքական դոկտրինի հիմնական դրույթներին, որոնք լայն կիրառություն են ստանում Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունում[19]: Թուրքիայի նոր արտաքին քաղաքականության գործնական կիրառությունը իր աշխատանքում ուսումնասիրում է Բյուլենթ Արասը[20]: Ըստ հեղինակի, թուրքական արտաքին քաղաքականության նոր մոտեցումները լավագույնս արտահայտվում են Հարավային Կովկասում, որտեղ Անկարայի համար առաջնային նպատակը հարաբերական խաղաղության պահանումն է և պետությունների հետ բարեկամական հարաբերություններ ձևավորելը: Այս միտքը արտահայտվում է նաև թեմայի ուսումնասիրությամբ զբաղվող նաև մյուս հեղինակների հետազոտություններում, որոնք նշում էին, որ Թուրքիայի համար կարևոր հարավկովկասյան տարածաշրջանում խաղաղության պահպանումը կենսական նշանակություն ունի էներգակիրների պատճառով: Միևնույն ժամանակ թուրքական նոր մոտեցման արտացալումն է Անկարայի տարածաշրջանային հակամարտություններում միջնորդ դեր ստանձնելու փորձերը: Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության ուսումնասիրությանն է նվիրված նաև Գրիգոր Արշակյանի «Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ.» աշխատությունը, որում հեղինակը քննության է առել թուրքական կողմի քաղաքականության առանձնահատկությունները Հարավային Կովկասում[21]:

Մյուս առանցքային հիմնահարցը թուրք-վրացական հարաբերություններում Աբխազիայի դերի ուսումնասիրությունն է: Թուրքիայի և Վրաստանի միջև հարաբերություններում առկա խնդիրների վերաբերյալ հարկ է առանձնացնել թուրք հետազոտող Գյոքսել Նիգարի հոդվածը[22]: Հեղինակը ի թիվս տարբեր տարածայնությունների թուրք-վրացական հարաբերություններում առանցքային խնդիրներից մեկը արդարացիորեն համարում է Աբխազիայում թուրքական կողմի տնտեսական գործունեությունը և 2008 թվականի «Հնգօրյա պատերազմի» ընթացքում Անկարայի որդեգրած մոտեցումները: Այս մոտեցման

[19] A. Davutoğlu, «Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu», İstanbul, 2001
[20] B. Gültekin, «Abkhazia for the Integration of the Black Sea», Center for Middle Eastern Studies and Economic Policy Research Foundation of Turkey, Ankara, 2009
[21] Գ. Արշակյան, «Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001թթ.», Երևան, 2009
[22] N. Göksel, «Turkey and Georgia: Zero-Problems?», Black Sea Trust for Regional Cooperation, 2013

շարունակություն է նաև Մարիաննա Վինդիմյանի միտքը, որ Աբխազիան թուրք-վրացական հարաբերությունում առկա միակ վիճահարույց հարցն է[23]: Կարելի է մասնակիորեն համաձայնվել այս կարծիքի հետ, որ Աբխազիան շարունակում է մնալ 2 երկրների միջև չկարգավորված ամենասուր խնդիրը՝ հաշվի առնելով ստվերային առևտուրը և կապերը, բայց այս խնդրին զուգահեռ կան նաև այլ տարածայնություններ, որոնք վերջին շրջանում զգալի հետք են թողնում 2 երկրների հարաբերությունների վրա:

Պետք է նշել, որ Վրաստանին զուգահեռ թուրք-աբխազական հարաբերություններում առանցքային տեղ էր զբաղեցնում նաև Ռուսաստանը: Թբիլիսիի քաղաքականությունը Սուխումի նկատմամբ և գործող շրջափակումը պատճառ հանդիսացավ, որ թուրք-աբխազական հարաբերություններում կարևորագույն տեղ ստացավ Ռուսաստանը: Մոսկվայի և Անկարայի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկություններին է վերաբերվում Ֆիյոնա Հիլի «Ռուսաստանը և Թուրքիան Կովկասում: Համագործակցությո՞ն ստատուս քվոյի պահպանության համար» աշխատանքը, որում ի թիվս Կովկասյան տարածաշրջանում առկա այլ խնդիրների ուշադրություն է դարձվում նաև Աբխազիայի հարցում երկու երկրների մոտեցումներին[24]: Գյոքսել Նիգարը երևան է բերում այն իրավիճակը, երբ 2008 թվականի օգոստոսի պատերազմի ժամանակ Թուրքիան հայտարարում էր Վրաստանի տարածքային ամբողջականությանը աջակցելու մասին, սակայն պաշտոնապես չէր քննադատում աբխազական կողմից հանդես եկող Ռուսաստանին[25]: Թուրքական կողմի այս մոտեցումը բացատրվում էր Ռուսաստանի հետ ունեցած կարևոր համագործակցությամբ տնտեսության տարբեր ոլորտներում, որը կարող էր վտանգի տակ դրվել ռուսական կողմի գործողությունների խիստ քննադատության դեպքում: Հետխորհրդային շրջանում թուրք-ռուսական հարաբերություններում առկա զարգացումների վերաբերյալ հետազոտություններ են կատարել քաղաքագիտական

[23] M. Vindimian, «Evolution of Turkish Foreign Policy towards Georgia», ISPI Policy Brief, № 196, Milan, 2010

[24] F. Hill, O. Taspinar «Russia and Turkey in the Caucasus: Moving Together to Preserve the Status Quo?», IFRI Research Programme Russi, Paris, 2006

[25] N. Göksel, «Turkish policy towards the Caucasus: A Balance Sheet of the Balancing Act», Center for Economic and Foreign Policy Studies, Istanbul, 2011

գիտությունների պրոֆեսոր Ջեյմս Ռարհոլան և Է. Տուժբան[26][27]: Հարավային Կովկասում Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքականությանն է անդրադարձել Ռուբեն Սաֆրաստյանը իր «Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. Աշխարհառազմավարական զինադադա՞ր» հոդվածում[28]:

Ժամանակակից Թուրքիայի տարածքում գործող աբխազական համայնքը մշտապես եղել է տարբեր հետազոտողների ուշադրության կենտրոնում: Անհրաժեշտ է նշել, որ շատ դեպքերում ուսումնասիրությունները վերաբերվում են Թուրքիայում հաստատված հյուսիսկովկասյան բոլոր համայնքներին, իսկ միայն աբխազական համայնքի վերաբերյալ հետազոտությունները բավականին փոքր թիվ են կազմում:

Աբխազական համայնքի ձևավորման վերաբերյալ կարևոր տեղեկություններ է տալիս Օլեգ Բգաբժայի և Ստանիսլավ Լակոբայի արդեն նշված աշխատությունը[29]: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է առանձնացնել նաև աբխազ պատմաբան Գեորգի Ձիձարիայի աշխատանքը, որում հեղինակը մանրակրկիտ ուսումնասիրում է XIX դարում աբխազ բնակչության «բռնի արտագաղթը» դեպի Օսմանյան կայսրություն, ինչպես նաև դրա հետևանքները Աբխազիայի վրա[30]: Նաև ուշադրության է արժանի թուրք պատմաբան Քեմալ Քարփատի «Օսմանյան բնակչությունը 1830-1914 թվականներին» գիրքը, որում հեղինակը հասանելի տվյալների հիման վրա պատկերել է Օսմանյան կայսրություն բնակվող էթնիկ խմբերի ժողովրդագրական պատկերը[31]: Աշխատանքը հնարավորություն է տալիս ուսումնասիրել «Մեծ գաղթի» արդյունքում օսմանյան պետությունում հաստատված չերքեզական բնակչության թվականը և բնակության հիմնական շրջանները[32]: Թուրքիայի

[26] J. Warhola, «The Warming of Turkish-Russian Relations: Motives and Implications», Demokratizatsiya: The Journal of Post-soviet Democratization, № 14, Washington, 2006

[27] Э. Тужба, «Постсоветская динамика российско-абхазских отношений», Современные исследования социальных проблем, № 3 (47), 2015

[28] Ռ. Սաֆրաստյան, «Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում. Աշխարհառազմավարական զինադադա՞ր», «Նորավանք» ԳԿՀ, 21-րդ ԴԱՐ, № 4, 2005

[29] О. Бгажба, Лакоба С., «История Абхазии. С древнейших времен до наших дней», Сухум, 2007

[30] Г. Дзидзария, «Махаджирство и проблемы истории Абхазии XIX столетия», Сухум, 1982

[31] K. Karpat, «Ottoman Population 1830-1914», Wisconsin, 1985

[32] «Մեծ գաղթ» եզրը հաճախ օգտագործվում է XIX դարում Հյուսիսային Կովկասի և Աբխազիայի իսլամադավան բնակչության դեպի Օսմանյան կայսրություն արտագաղթի

հասարակությունում չերքեզների ինտեգրման գործընթացի մասին պատկերացում կազմելու համար բավականին կարևոր է Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Այհան Քայայի հոդվածը[33]: Հեղինակը իր աշխատանքում վերլուծում է Օսմանյան կայսրություն գաղթելուց հետո չերքեզական համայնքի առաջ ծառացած խնդիրները և ինտեգրացիոն գործընթացներում համայնքի մասնակցությունը, ինչպես նաև անդրադարձ է կատարվում հասարակության տարբեր շերտերի վերաբերմունքին չերքեզների նկատմամբ: Թուրքիայի արտաքին քաղաքականությունում հյուսիսկովկասյան համայնքների դերի մասին կարևոր աշխատություն է նաև Արսեն Ավագյանի հեղինակած «Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում» գիրքը, որում հեղինակը համապարփակ վերլուծության է ենթարկում համայնքների ազդեցությունը Թուրքիայի և ԽՍՀՄ հարաբերություններում[34]: Նաև անհրաժեշտ է առանձնացնել Արսեն Ավագյանի հեղինակած «Չերքեզական գործը Օսմանյան կայսրությունում և Թուրքիայում (XIX դարի երկրորդ կես և XX դարի առաջին քառորդ)» գիրքը[35]:

Թուրքիայում աբխազական համայնքի ուսումնասիրության հարցում մյուս կարևորագույն գործոնը հասարակական կազմակերպությունների գործունեության վերլուծությունն է: Աբխազական և չերքեզական հասարակական կազմակերպությունների գործունեության և նախագծերի մասին կարելի է տեղեկություններ գտնել վերջիններիս կայքերում տեղադրված հաշվետվություններից և լուրերից: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է մատնանշել կազմակերպությունների գործունեության վերաբերյալ կատարված մի շարք հիմնարար աշխատություններ: Դրանց թվում առաջին հերթին անհրաժեշտ է ընդգծել Զեյնել Բեսլենեյի հեղինակած «Չերքեզական սփյուռքը Թուրքիայում. Քաղաքական պատմություն» գիրքը, որում ուսումնասիրվում է չերքեզական կազմակերպությունների գործունեության հիմնական

համար: Որոշ չերքեզական և աբխազական աղբյուրներում հնարավոր է նաև հանդիպել «Մեծ արտաքսում» և «Չերքեզական ցեղասպանություն» եզրերը

[33] A. Kaya, «Cultural reification in circassian diaspora: stereotypes, prejudices and ethnic relations», Journal of Ethnic and Migration Studies, Vol. 31, Is. 1, 2005

[34] Ա. Ավագյան, «Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920 – 1971 թթ.)», Երևան, 2011

[35] А. Авакян, «Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.)», Ереван, 2001

ուղղությունները և Կովկասում աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխության արդյունքում դրանցում գրանցված փոփոխությունները[36]: Չերքեզական համայնքի ձևավորման խնդրի շուրջ անհրաժեշտ է նաև մատնանշել Ստամբուլի «Քադիր Հաս» համալսարանի պրոֆեսոր Միթաթ Չելիքփալայի հոդվածը: Հեղինակը իր աշխատանքում ներկայացնում է Թուրքիայում հաստատված աբխազների մասնակցությամբ գործող հասարակական կազմակերպությունները և դրանց իրականացրած գործունեությունը կապված Աբխազական հակամարտության հետ[37]:

Թուրքիայում աբխազական համայնքի գործունեության մասին արժեքավոր աշխատանքներ է հրատարակել նաև Էրգյուն Օզգյուրը, որոնցում հեղինակը մանրամասն անդրադարձ է կատարում գործող կազմակերպություններին և դրանց իրականացրած լոբբիստական գործունեությանը: Անհրաժեշտ է նշել, որ հեղինակը իր աշխատություններում առանձնանցում է նաև աբխազական համայնքի կողմից հիմնադրված հասարակական կազմակերպությունները: Հեղինակների աշխատանքներից նաև հնարավոր է ծանոթանալ Աբխազիայում և այլ երկրներում գործող աբխազական կազմակերպություններին: Աբխազական պաշտոնյաների Թուրքիա կատարած այցելություններին իրենց ուսումնասիրություններում անդրադառնում Անտոն Կրիվենյուկը և Էրիկ Էիսլերը[3839]: Հեղինակները համակարծիք են, որ Թուրքիան Աբխազիայի հետ հարաբերությունները պահպանում է անձնային ոլորտի վրա, իսկ պետական մակարդակում շարունակում է աջակցել «Վրաստանի տարածքային ամբողջականությանը»: Աբխազիայի հետ առևտուրը և ներդրումները կատարում են անհատները, որոնք հիմնականում ներկայացնում են թուրքաբնական աբխազական համայնքի ներկայացուցիչները:

Էլիզաբեթ Օուենը իր հետազոտությունում նկատում է, որ Թուրքիայում բնակվող աբխազները հետաքրքրված են Աբխազիայում ներդրումներ կատարելու մեջ հատկապես 2008 թվականի դեպքերից հետո՝ իրենց հարցազրույցներում նշելով, որ ստեղծվել է ներդրումների համար

[36] Z. Besleney, «The Circassian Diaspora in Turkey: A Political History», New York, 2014

[37] M. Çelikpala, «From immigrants to diaspora: Influence of the North Caucasian diaspora in Turkey», Middle Eastern Studies, Vol. 42, Is. 3, 2006

[38] А. Кривенюк, «Абхазия - Турция: отношения, которых нет», Абхазия-Информ, 29. 01.2016 (https://goo.gl/124t6L)

[39] E. Eissler, «Can Turkey De-Isolate Abkhazia», Turkish Policy Quarterly, Vol. 12, № 3, Istanbul, 2013

ամենաշահավետ շրջանը: Հեղինակի աշխատանքից կարևոր է նաև ուշադրություն դարձնել հայրենադարձության մասին ուսումնասիրությանը: Աբխազիայի քաղաքականությունից զատ հետաքրքրության է արժանի այն փաստը, որ թուրքաբնակ աբխազները պատրաստ չեն իրենց համեմատաբար ավելի բարեկեցիկ բնակավայրերը Թուրքիայում փոխարինել աբխազիայի հետ, և ձգտում են Աբխազիայի կայացմանը և զարգացմանը օգնել միայն հեռավորության վրա:[40]:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան յոթ ենթագլուխներով, եզրակացություններից, հավելվածներից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում ներկայացվում են ատենախոսության նպատակն ու խնդիրները, թեմայի ուսումնասիրվածության վիճակը և գիտական հրապարակումները, ատենախոսության արդիական, նորույթային նշանակությունները, աշխատանքի հետազոտական ու վերլուծական մեթոդաբանությունը և ատենախոսության համառոտ կառուցվածքը:

Առաջին գլուխը վերնագրված է ***«Թուրք-աբխազական հարաբերությունները 1991-2010 թվականներին»*** և բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում, որը վերնագրված է ***«Թուրք-աբխազական հարաբերությունները մինչև 1991 թվականը. պատմական ակնարկ»***, 1991-2010 թվականներին Թուրքիայի և Աբխազիայի հարաբերություններում առկա առանձնահատկությունները համապարփակ հասկանալու նպատակով ուսումնասիրվել են թուրք-աբխազական հարաբերություններում XV-XX դարերում տեղ գտած պատմական զարգացումները: Ուսումնասիրվել է XV-XIX դարերում Օսմանյան կայսրության Աբխազիայում վարած քաղաքականությունը, ներկայացվել են նաև Աբխազիայի՝ Ռուսական կայսրության կազմում ընդգրկվելուց հետո թուրք-աբխազական հարաբերություններում տեղ գտած փոփոխությունները, ինչպես նաև Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Աբխազիայում տեղ գտած զարգացումները, որոնցում առանցքային դեր էին կատարում կամ տեղաբնակ թուրքամետ գործիչները, կամ Օսմանյան կայսրությունից ժամանած անհատները: Ուշադրության է արժանի

[40] O. Elizabeth, «Abkhazia's Diaspora: Dreaming of Home», Eurasianet, 08.03.2009 (https://goo.gl/bBkd9t)

նաև այն փաստը, որ օսմանների նախաձեռնությամբ 1918 թվականի Բաթումի բանակցություններին մասնակցում էին նաև աբխազական կողմի ներկայացուցիչները:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«Աբխազական հակամարտությունը (1992-93 թթ. և 2008 թ. պատերազմները) և Թուրքիան»***, ներկայացված է Աբխազական հակամարտության պատմությունը: Ենթագլխում ուսումնասիրվել է թուրքական իշխանությունների որդեգրած քաղաքականությունը 1992-1993 թվականներին և 2008 թվականին Աբխազիայի և Վրաստանի միջև տեղ գտած զինված բախումների ժամանակ: Ներկայացվել է թե՛ Թուրքիայի իշխանությունների և թե՛ Թուրքիայում բնակվող աբխազական համայնքի գործունեությունը Աբխազիայում ընթացող պատերազմի տարիներին:

Երրորդ ենթագլխում, որը վերնագրված է ***«Աբխազիայում Թուրքիայի վարած տնտեսական և մշակութային քաղաքականությունը 1991-2010 թվականներին»***, ուսումնասիրվել է Թուրքիայի Աբխազիայում վարած քաղաքականությունը 1991-2010 թվականներին: Ներկայացված են Աբխազիայի տնտեսությունում թուրքական կողմի գործունեության հիմնական ոլորտները, ապրանքաշրջանառության ծավալները և ընտրված ժամանակահատվածում առկա խնդիրները: Տնտեսական քաղաքականությանը զուգահեռ ենթագլխում ներկայացված են թուրքական կողմի գործունեությունը Աբխազիայի այլ ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, մշակույթը և այլն:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է ***«Աբխազիայի գործոնը Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունում»*** և բաղկացած է երկու ենթագլուխներից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում, որը վերնագրված է ***«Աբխազիայի գործոնը թուրք-վրացական հարաբերությունների համատեքստում 1991-2010 թվականներին»***, ուսումնասիրվել են Անկարայի և Թբիլիսիի հարաբերություններում աբխազական հիմնախնդրի և Աբխազիայում թուրքական կողմի վարած քաղաքականության ունեցած ազդեցությունը: Վրաստանի դժգոհությունների հիմնական պատճառները Աբխազիայի նկատմամբ թուրքական իշխանությունների վարած քաղաքականությունն է, ինչպես նաև Թուրքիայում բնակվող աբխազական համայնքի գործունեությունը: Առաջին հերթին, վրացական կողմի քննադատության հիմնական պատճառը Թուրքիայի տնտեսական գործունեությունն էր Աբխազիայում: Միևնույն ժամանակ, վրացական կողմը Թուրքիային հաճախ դիտարկում էր որպես

հնարավոր միջնորդ վրաց-աբխազական հարաբերությունների կարգավորման հարցում:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է **«Աբխազիայի գործոնը թուրք-ռուսական հարաբերությունների համատեքստում 1991-2010 թվականներին»,** ուսումնասիրվել է Աբխազիայի հիմնախնդրի դերը Թուրքիայի և Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականությունում: Թուրքական իշխանությունները որպես իրենց ազդեցության հիմնական գործիք սկսեցին դիտարկել նորանկախ պետությունների հետ տնտեսական սերտ հարաբերությունների հաստատումը: Դրան հակառակ Ռուսաստանը ձգտում էր կարճ ժամանակում վերականգնել Խորհրդային Միության փլուզումից հետո տարածաշրջանում իր թուլացած ազդեցությունը, ինչի համար օգտագործում էր տարբեր գործիքակազմ, իսկ երբեմն նաև դիմում էր ուժի կիրառության: Նման մոտեցումները նպաստեցին, որ թուրքական կողմը Աբխազիայի հակամարտության կարգավորման հարցում առաջնային տեղ էր տալիս Ռուսաստանի հետ համագործակցությանը: Սկսած 1990-ականների առաջին կեսից Մոսկվան և Անկարան ստորագրեցին մի շարք միջպետական համաձայնագրեր, որոնցով նախատեսվում էր համագործակցել տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման հարցում:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է ***«Աբխազական համայնքի ազդեցությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա»*** և բաղկացած է երկու ենթագլուխներից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում, որը վերնագրված է «***Աբխազական համայնքը և ազգային կազմակերպությունները Թուրքիայում»***, ներկայացված է Թուրքիայում աբխազական համայնքի ձևավորման պատմությունը: Ենթագլխում անդրադարձ է կատարվում XIX դարի երկրորդ կեսին տեղի ունեցած «Մեծ գաղթին» և աբխազների տեղաբնակեցմանը Օսմանյան կայսրությունում: Ներկայացված են մինչև 2010 թվականը Թուրքիայում աբխազների և հյուսիսկովկասյան ժողովուրդների հիմնադրված հասարակական կազմակերպությունները և դրանց գործունեության հիմնական ուղղությունները:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է **«Աբխազական համայնքի դերը Թուրքիայի արտաքին քաղաքականությունում»,** ուսումնասիրվել է Թուրքիայում գործող աբխազական համայնքի լոբբիստական գործունեությունը հօգուտ Աբխազիայի: Ենթագլխում ներկայացվել են 1991-2010 թվականներին աբխազական համայնքի և ազգային հասարակական

կազմակերպությունների իրականացրած միջոցառումները և գործունեության հիմնական ոլորտները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտական աշխատանքի շրջանակներում Անկարայի և Սուխումի միջև ձևավորված հարաբերությունների ուսումնասիրության արդյունքում եկել ենք ներքոնշյալ գիտական եզրահանգումներին.

- Անկախ թուրք-աբխազական պաշտոնական հարաբերությունների բացակայության փաստից, Թուրքիան Աբխազիայի համար առանցքային տեղ էր զբաղեցնում ուսումնասիրվող ժամանակահատվածում: Պետք է ընդգծել, որ սկսած նախորդ դարի 90-ականներից երկկողմ հարաբերություններում առկա է դրական զարգացման դինամիկա:
- Աբխազական հիմնախնդրի հարցում թուրքական իշխանությունները փորձում են հանդես գալ հարաբերական չեզոք դիրքերից: Մի կողմից Անկարան պաշտոնական հայտարարություններում հանդես է գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության սկզբունքի պաշտպանությամբ, մյուս կողմից չի խոչընդոտում իր քաղաքացիների գործունեությանը Աբխազիայում:
- Չնայած ուսումնասիրվող ժամանակահատվածում Անկարայի և Թբիլիսիի հարաբերություններում ժամանակ առ ժամանակ նկատվում է լարվածության մեծացում Աբխազիայում թուրքական կողմի իրականացրած առևտրային գործունեության պատճառով, կարելի է նշել, որ թուրք-վրացական հարաբերություններում Աբխազական հիմնախնդիրը կորցրել է իր կարևորությունը:
- Թուրք-աբխազական հարաբերություններում սկսած 2000-ականների կեսից առանցքային դեր է ստանձնել Ռուսաստանը: Վերջինիս տարածքով է իրականացվում թուրք-աբխազական ապրանքաշրջանառության զգալի մասը, ռուսական ռազմածովային ուժերի պաշտպանության տակ են գտնվում Աբխազիայի տարածքային ջրերը, ինչի շնորհիվ Թուրքիայից ուղևորվող նավերը առանց խոչընդոտների կարողանում են հասնել աբխազական նավահանգիստներ

- Աբխազական հիմնախնդրի սրացումը 1980-ականների երկրորդ կեսին և 1992-1993 թվականների վրաց-աբխազական պատերազմը նպաստեցին նրան, որ Թուրքիայում բնակվող աբխազական համայնքը դառնա կարևոր քաղաքական միավոր թուրք-աբխազական հարաբերություններում:
- Աբխազիայի հետ հարաբերությունները թուրքական կողմը պահպանում է միջանձնային մակարդակի վրա՝ խուսափելով պաշտոնական հարաբերությունների հաստատումից: Այս հարցում առաջնային դեր է կատարում Թուրքիայում հաստատված աբխազական համայնքը:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Ղափլանյան Վ., 1992-1993 թթ. վրաց-աբխազական պատերազմի տարիներին հակամարտության կողմերի նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականության առանձնահատկությունները, «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, № 1, Երևան, 2018, էջ 238-244:
2. Капланян В., Последствия признания Российской Федерацией независимости Абхазии на турецко-абхазские отношения, Международные отношения, №2, 2018, стр. 25-31:
3. Ղափլանյան Վ., Թուրքիայի քաղաքականության առանձնահատկությունները Հարավային Կովկասի հակամարտությունների վերաբերյալ, «Բանբեր հայագիտության» հայագիտական միջազգային հանդես, № 1, Երևան, 2018, էջ 95-102:
4. Ղափլանյան Վ., Թուրքիայում բնակվող իսլամադավան աբխազական համայնքի ձեվավորումը և գործունեությունը 1992-1993 թթ. վրաց-աբխազական պատերազմի տարիներին, Արաբագիտական ուսումնասիրություններ, Հատոր 10 Երևան, 2018, էջ 9-22:
5. Капланян В., Причины провала турецкой модели по урегулированию конфликтов в Абхазии, Нагорном Карабахе и Южной Осетии в 2008 году («Платформа стабильности и сотрудничества на Кавказе»), Мировая политика, №2, 2018, стр. 35-44:

6. Գրիգորյան Ա., Ղափլանյան Վ., Թուրքիայի «ռազմավարական խորության» դոկտրինի կիրառությունը Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում հակամարտությունների կարգավորման համատեքստում, Արաբագիտական ուսումնասիրություններ, Հատոր 10 Երևան, 2018, էջ 33-47:

КАПЛАНЯН ВАРДАН АРТУРОВИЧ
ПОЛИТИЧЕСКИЕ И ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ ТУРЦИИ В АБХАЗИИ В 1991-2010 ГОДАХ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история, международные отношения». Защита состоится 27 июля, 2018г., в 13:00, на заседании специализированного совета 006 "Всемирная история, международные отношения", действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Цель диссертационной работы - изучение истории турецко-абхазских отношений 1991-2010 годах. В работе исследованы последствия экономической и культурной политики Турции в Абхазии, а также влияние Абхазского вопроса на турецко-грузинские и турецко-российские взаимоотношения. Работа также позволит создать четкое представление об участии и подходах Турции в ряде значительных исторических событий в период 1991-2010 годов в абхазском вопросе.

Основой научной новизной диссертации является комплексное изучение и анализ исторических событий, связанные с турецко-абхазскими отношениями в 1991-2010 годах, влияние турецкой политики в Абхазии на взаимоотношения Турции с Грузией и Россией, а также влияние абхазской диаспоры на внешнюю политику Турции по отношению Абхазского конфликта.

Диссертация состоит из введения, двух глав, семь параграфов, заключения, списка использованных источников и дополнения.

В ***введении*** обосновываются актуальность темы и хронологические рамки работы, ставятся цель и задачи, представляются методологическая основа, научная новизна исследования, обзор использованных источников и литературы.

В первой главе, которая озаглавлена «***Турецко-абхазские отношения в 1991-2010 годах***» и состоит из трех параграфов, подробно рассматриваются история турецко-абхазских отношений с XV века, подходы Анкары к абхазскому конфликту и деятельность Турции в Абхазии в 1991-2010 годах. В первой главе представлены исторические события связанные с турецко-абхазскими отношениями в XV-XX годах, политика Османской империи по отношению Абхазии. В первой главе также изучается турецкая политика в годы грузино-абхазской войны (1992-1993 гг. и 2008 г.), а также деятельность абхазской общины в этот период. В первой главе также рассматривается основные направления экономической деятельности турецкой стороны в Абхазии, объемы товарооборота между странами, а также турецкие проекты в сфере культуры, образования и т.д.

Вторая глава озаглавлена «***Абхазский фактор во внешней политике Турецкой Республики***» и состоит из двух параграфов. Во второй главе подробно представлены взаимоотношения Турции с Россией и Грузией, а также основные проблемы двухсторонних отношений в контексте турецкой политики в Абхазии.

Третья глава озаглавлена «***Влияние абхазской общины на внешнюю политику Турции***» и состоит из двух параграфов. В этой главе рассматривается история формирования абхазской диаспоры в Турции, а также формирование национальных организаций и основных сфер их деятельности. Отдельно представлена также лоббистская деятельность абхазской общины в пользу Абхазии, а также влияние на политику, проводимую Турцией в отношении Абхазии.

В ***заключении*** представлены основные результаты исследования.

VARDAN A. GHAPLANYAN
POLITICAL AND ECONOMIC CONSEQUENCES OF THE ACTIVITY OF TURKEY IN ABKHAZIA IN 1991-2010

The defense of dissertation will take place at 13:00, on 27th of July of 2018, at the meeting of the Specialized council 006 "World History, International Relations" at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4. The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the field of "World History, International Relations" 07.00.02.

SUMMARY

The main goal of this dissertation research is to study the history of Turkish-Abkhaz relations in 1991-2010. This dissertation examines the consequences of Turkey's economic and cultural policies in Abkhazia, as well as the impact of the Abkhazian issue on the Turkish-Georgian and Turkish-Russian relations. It also creates a clear picture of Turkey's participation and approaches in a number of significant historical events in the Abkhaz issue in the period between 1991 and 2010.

The basis of the scientific novelty of the dissertation is comprehensive study and analysis of historical events related to the Turkish-Abkhaz relations in 1991-2010, the impact of Turkish politics in Abkhazia on Turkey's relations with Georgia and Russia, as well as the influence of the Abkhaz diaspora on Turkey's foreign policy towards the Abkhaz conflict.

The dissertation consists of an introduction, two chapters (each of which includes the relevant paragraphs), conclusions, literature and appendix.

The ***introduction*** substantiates the relevance and chronological framework of the research, sets the main goal and objectives, presents the scientific novelty, methodological basis of the research and the literature review

The first chapter of the dissertation, which is entitled "***Turkish-Abkhaz Relations in 1991-2010***" and consists of three paragraphs, discusses the history of Turkish-Abkhaz relations starting from the 15th century, the approaches of Ankara to the Abkhaz conflict and the activities of Turkey in Abkhazia in 1991-2010. The first chapter presents historical events related to the Turkish-Abkhaz relations in the 15th-20th centuries, the policy of the Ottoman Empire in relation to Abkhazia. The first chapter also examines Turkish policy during the years of the Georgian-Abkhaz war (1992-1993 and 2008), as well as the activities of the Abkhaz community during this period. The first chapter also examines the main directions of the economic activities of the Turkish side in Abkhazia, the volume of trade tunover between these countries, as well as Turkish projects in the field of culture, education, etc.

The second chapter is entitled "***The Abkhaz factor in the foreign policy of the Republic of Turkey***" and consists of two paragraphs. The second chapter represents Turkey's relations with Russia and Georgia, as well as the main problems of bilateral relations in the context of Turkish policy in Abkhazia.

The third chapter is entitled "***The influence of the Abkhaz community on Turkey's foreign policy***" and consists of two paragraphs. This chapter examines the history of the formation of the Abkhaz diaspora in Turkey, as well as the formation of national organizations and the main spheres of their activities. The lobbying of the Abkhaz community in favor of Abkhazia, as well as the influence on the policy pursued by Turkey towards Abkhazia are also presented in this cahpter.

The main results of the research are presented in the ***conclusion***.